ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ
346 North Central Ave., Glendale, CA 91203 Հեռ.՝ (818) 265-5900 , Ֆաքս՝ (818) 265-3800, Էլ. փոստ՝ armgenconsulatelos@mfa.am

Սույն հայտարարությունը տրվում է ներկայացնել ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ՀՀ բոլոր դատական ատյաններին և Հայաստանի ազգային պատկերասրահին:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Լոս Անջելես, տասնյոթը հունիսի, երկու հազար քսաներկու թվական:

Ես՝ ԱՄՆ քաղաքացի ԷՄԱՆՈՒԷԼ ԷՄԻԼ ԳԱԶԱԶՍ, ծնված՝ 14.01.1953թ., անձնագիր թիվ՝666398520, տրվել է՝2021թ օգոստոսի 5.-ին, ժամկետը լրանալու է 2031թ-ին օգոստոսի 4-ին, ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, հասցե՝ 516 Նարանջա Դրայվ, Գլենդել,Կալիֆորնիա 91206, Ամերիկայի Միացյալ Նահանգներ,

Սույն հայտարարությամբ հաստատում եմ, որ Գայանե Կոլյայի Կարապետյանի կողմից ինձանից և իմ բացառիկ ներկայացուցիչ Մոնե Հայրյան Գազազից 2019թ-ին Երևանում վերցրած 41 ստեղծագործություններիբացառիկ իրավունքը պատկանում է միայն ինձ: Նշված, ինչպես նաև իմ այլ ստեղծագործությունների նկատմամբ իմ բացառիկ իրավունքները փոխանցել եմ միայն իմ կնոջը՝ Մոնե Հայրյան Գազազին, ով իմ բացառիկ ներկայացուցիչն է աշխարհում: Իսկ իմ նախկին կնոջը՝ Ռոզիկ Ա. Կազազյանին համաձայնություն չեմ տվել իմ ստեղծագործություններն օգտագործել:

Գայանե Կոլյայի Կարապետյանի կողմից նշված 41 ստեղծագործություններն ինձանից ենթադրյալ հափշտակելու փաստի առիթով հարուցված թիվ 14886220 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2022թ. փետրվարի 4-ի ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ. Վ.Հովհաննիսյանի որոշմամբ սխալ ամրագրում է կատարվել՝ 41 ստեղծագործությունների նկատմամբ իմ նախկին կին Ռոզիկ Ա.Կազազյանի կողմից իբրև իրավունքներ ունենալու մասին: Այդ ստեղծագործությունների տնօրինման,տիրապետման և օգտագործման իրավազորություններն իմն են որպես հեղինակ, և իմ նախկին կինը՝ Ռոզիկ Ա. Կազազյանը, որևէ իրավունքներ այդ ստեղծագործությունների նկատմամբ չունի:

Հայտարարում եմ, որ ես երբեք Գայանե Կոլյայի Կարապետյանին չեմ լիազորել լինել իմ թանգարանի տնօրենը, որևէ կերպ կապ ունենալ իմ անունով թանգարան բացելու նախաձեռնությունների հետ կամ իմ անունով թանգարանի տարածք ստանալ: Ես երբևէ որևէ տեսակի հարաբերություն չեմ կառուցել <<ԿԱԼԳ>> երիտասարդական հասարակական կազմակերպության հետ: Ես դիմել եմ դատարան՝ Գայանե Կոլյայի Կարապետյանին պահանջ ներկայացնելով՝ ներողություն խնդրել՝ ինձ հասցրած վիրավորանքի համար, ինչպես նաև հրապարակային հերքելու ինձ վիրավորող արտահայտությունը: 08.10.2020 թվականին հարուցված թիվ 14886220 քրեական գործով կայացված որոշումը ներկայումս մինչդատական վերահսկողության կարգով բողոքարկվում է դատարանում:

Ես երբեք Գայանե Կարապետյանին չեմ լիազորել լինել իմ ներկայացուցիչը: Այդ տիկինն իմ անունից հանդես գալու լիազորություն չի ունեցել, և ես երբեք նրան լիազորագիր չեմ տվել:
Իմ ներկայացուցիչն է Մոնե Հայրյան Գազազն արդեն 16 տարի:

ԷՄԱՆՈՒԷԼ ԷՄԻԼ ԳԱԶԱԶ ______________________________
/ստորագրություն, անուն ազգանուն/

Տասնյոթը հունիսի, երկու հազար քսաներկու թվականին սույն հայտարարությունը վավերացված է իմ՝ Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսության խորհրդական Վարազդատ Պահլավունու կողմից:
Հայտարարությունը ստորագրված է ԱՄՆ քաղաքացի Էմանուել Էմիլ Գազազի կողմից՝ իմ ներկայությամբ: Նրա ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում՝ 1279-ով:
Գանձված է պետական տուրք՝ համաձայն «Պետտուրքի մասին» ՀՀ օրենքի:

Խորհրդական՝ Վարազդատ Պահլավունի ______________________________
/ստորագրություն/